# Արձանագրություն

**Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

***Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայր***

**02/10/2025**

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «Նանատ» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ հանրային երկրորդ լսումը տեղի ունեցավ Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում:

Լսմանը մասնակցեցին նախաձեռնող խմբի անդամները, վարչական ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև շահագրգիռ հանրության անդամներ:

Հանրային լսումը Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի սահմանված կարգով բացեց շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնի ներկայացուցիչ Շ. Կարապետյանը, ով ներկայացրեց նախատեսվող աշխատանքների հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները:

Նախաձեռնող խմբի անդամները աշխատանքների ներկայացման վերաբերյալ հավելելու անհրաժեշտություն չգտան:

Շ. Կարապետյանի կողմից բարձրացվեց հարց՝ աշխատանքների ընթացքում ռեկուլտիվացիոն գործընթացի կազմակերպման ժամկետների վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ տարածքում հնարավոր է արածող կենդանիների առկայություն: Նախաձեռնող կողմից հստակեցվեց, որ նախագծով նախատեսվում է անմիջապես խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ փորվածքների լցում, հողազուրկ մակերեսների հարթեցում և ամրացում:

Հանրության կողմից հարցեր չտրվեցին նախագծի վերաբերյալ և ամփոփվեց հանրային լսումը ,նշելով՝ որ հնարավոր կարծիքները, դիտարկումները և առաջարկները կարող են ներկայացվել շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն կամ նախաձեռնողին՝ օրենքով սահմանված կարգով:

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ — Շ.Կարապետյան

«Նանատ» ՍՊԸ Տնօրեն՝ — Հ.Սարգսյան